

Փ.

Առաջին հատորին յաւելուածին մէջ հրատարակուած վաւերաթուղթերուն մէջ կան հետաքրքրականներ մեզի համար: Զանոնք եւս թարգմանաբար հոս կը ներկայացնեմ:

#### ԱՌԱՋԻՆ ՎԱԻՆԵՐԱԹՈՒՂԹ

«Սուլթանին խաթը ըշտիֆին պարունակութիւնը: Հրամանագիր՝ տրուած Քիոսի (կղզի) հոռմէական կաթողիկէներու դէմ»:

«Մեր Սերասկէր, Իպրահիմ փաշան, մեզ կը տեղեկագրէ Սաքըզի (Քիոս կղզի) փրանկ քահանաներու վարմունքին մասին, որոնք ոչ միայն Հոռմի Պապին գործիչներն են, այլեւ մեր կայսրութեան մէջ լրտեսներ: Անոնք մոլորեցուցած են եւ դեռ կը ջանան մոլորեցնել մեր քրիստոնեայ ուսանողները, թէ՛ հայ եւ թէ՛ յոյն, իրենց հաւատարմութենէն մեր ամենագերագոյն Դոնէն, նաեւ իրենց կրօնքէն: Մենք ապահովուած ենք, որ այս գաղտնի նպատակին համար անոնք ունին զանազան ձեւերու տակ անուղղակի կերպով առնուած անցադրեր, մասնաւորապէս մեր նախորդներէն քանի մը քրիստոնեայ իշխաններու շնորհուած առանձնաշնորհմանց ձեւին տակ, իրենց կրօնական ազատութեան համար մեր կայսրութեան եւ թագաւորութեան մէջ: Եւ անոնք այսպիսի անցադրերով դաւառէ դաւառ կ'երթան մեր իշխանութեան մէջ, Եւրոպա, Ասիա եւն., մեր յիշեալ հպատակները հրապարակաւ հոռմէական կրօնքին հրապուրելով, ի մեծ վրդովում մեզի հաւատարիմ ուսանողներուն, որոնցմէ ամէն օր

նեղացուցիչ դանդաւաններ կը հասնին մեր Բարձրագոյն Դրան: Որով՝ դուք, Սերասկէրներ, փաշաներ ու քաղաքներու, աւաններու եւ բերդերու հրամանատարներ, նաեւ մեր Բարձրագոյն Դրան ուրիշ պաշտօնեաներ, պէտք է ստիպէք ու պարտադրէք մեր ուսանողներ՝ անոնք, որ լքած են յոյն, հայ, սիւրիացի, մարոնիտ, եւն. եւ իրենց կրօնքը եւ իրենց հին ծէսը, ըլլան որ Հոռմայ Պապին կը հետեւին, վերադառնալ իրենց հին հաւատքին եւ յիշեալ լքուած ծէսերուն ու կրօնքին: Նոյն ատեն պէտք է ընդդիմանաք եւ պատժէք մեր յիշեալ ուսանողները այդպէս յուզողներն ու մոլորեցնողները եւ յիշեալ ուսանողներէն անոնք, որոնք կը քաջալերեն նման գաղտնածածուկ գործեր: Տրուած՝ ի մեր քաղաքն Էտիրնէ (Ա. Պոլիս), 15 Ռապի-իւլ-էվլի, 1107»: (37):

Հինրէթի այս թուականը կը հաւասարի ներկայ Քրիստոսի 1695 Հոկտեմբեր 24-ին:

“Mr. De Chateau Neuf, Փրանսական դեսպանին քարտուղարը, խաթը ըշտիֆին մէկ օրինակը զրկած է Յիսուսեաններու մեծաւորին՝ հետեւեալը աւելցնելով. —

«Վերապատուելի Հայր, ներփակ ձեզի կը զրկեմ արտագրութիւն մը Սուլթանին խաթը ըշտիֆին, ըստ հրամանի նորին բարձրութեան (դեսպանին) հաղորդել ձեր միաբանութեան եւ խնդրել ձեզմէ, որ խորհուրդ տաք թուրքիոյ ձեր բոլոր քարտուղիներուն, որ զգուշանան ապագային յարաբերել Սուլթանին քրիստոնեայ հր-